Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի «Դեդալ» ՍՊԸ կողմից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

05.08.2019թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2019 թվականի հուլիսի 31-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի «Դեդալ» ՍՊԸ կողմից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Դեդալ» ՍՊԸ տնօրեն՝ Ռ. Համբարձումյանը, «Ընդերք» ՍՊԸ նախագծող՝ Ս. Գևորգյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ա. Համբարձումյանը: Նա ողջունեց ներկաներին, ընթերցեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2019 թվականի հուլիսի 19-ի թիվ 131 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Դեդալ» ՍՊԸ տնօրեն՝ Ռ. Համբարձումյանին: Նա նշեց, որ 2007 թվականից «Դեդալ» ՍՊԸ կողմից շահագործման աշխատանքներ են իրականացվել Եղվարդի մարմարացված կրաքարի հանքավայրում և նախատեսվում է շարունակել այդ աշխատանքները: Լիցենզիայի ժամկետը ավարտվել է 2019 թվականին: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն այս գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության:

Ընկերությունը դիմել է Կապանի համայնքապետարան՝ հանրային քննարկումներ կազմակերպելու և նախնական համաձայնություն ձեռք բերելու համար, որի հիման վրա ՍՊԸ կողմից կկազմվի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ՝ բնապահպանական փորձաքննության ենթարկելու նպատակով: Մինչ այս, մինչ շահագործումը նույն այս փուլերը անցել են, բնապահպանական թույլտվությունը կար, բայց քանի որ լիցենզիայի ժամկետը լրացել է, հետևաբար անհրաժեշտ է նոր հիմունքներով շարունակել:

Կարծիք (Սպարտակ Զաքարյան)

Ծանոթ ենք ծրագրին: Նույնիսկ տեսանելի է, որ շրջակա միջավայրին վնաս հասցնող երևույթ չկա: Տարիներ շարունակ հանքը շահագործելու թույլտվությունը եղել է: Բոլորը տեղյակ են նաև, որ ՍՊԸ կողմից ներդրումը գյուղում միշտ եղել է: Հաջողություն եմ ցանկանում ծրագրին:

Լրացում (Ռաֆիկ Համբարձումյան)

Նախկին փորձաքննության եզրակացությունը կա, նույն հանքավայրն է, ոչինչ չի փոխվել: Իհարկե նոր նախագծում լինելու են նոր պարտականություններ, սակայն հանքավայրի տարածքում բացակայում են բուսականությունը, գետային ցանքսերը, շինարարական կառույցները, հուշարձանները: Նվազագույնը 6 աշխատող կլինի և հենց գյուղից: Պայթեցման աշխատանքներ չեն կատարվելու, սղոցման արտադրամաս այսօրվա դրությամբ առկա չէ:

Լրացում (Սահարոն Գևորգյան)

«Ընդերք» ՍՊԸ զբաղվում է երկրաբանահետախուզական և արդյունահանման նախագծերի կազման աշխատանքներով: 2007 թվականին «Դեդալ» ՍՊԸ նախագծային աշխատանքները կատարել էր «Ընդերք» ՍՊ ընկերությունը: Այս փուլը կոչվում է նախնական համաձայնության լսումների փուլ: Համաձայնությունը ստանալու դեպքում արդեն կսկսվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազման աշխատանքները: Հայտում ներառվելու են տարածքի ելակետային վիճակի տվյալները, ինչպես նաև, թե նախագծով ինչ է սպասվում: Բնականաբար պայթեցում չի թույլատրվում, այլ մեխանիզմներ կան: Հայտում նկարագրվելու են բոլոր սպասելիք ազդեցությունները: Հայտը՝ հանրային քննարկման արձանագրության, տեսաձայնագության և նախնական համաձայնության հետ ուղարկվելու է շրջակա միջավայրի նախարարություն, որտեղ անցնելու է թվով 5-6 վարչություններով (օդ, ջուր,

հող, բույսեր, կենդանիներ): Արդյունքում դիտողությունները գրելու են, որի դեպքում կամ պետք է հիմնավորենք մեր գրածը, կամ պետք է կատարենք իրենց դիտողությունները: Դրական եզրակացության դեպքում ՇՄԱԳ մասնագետները հանրային 2-րդ լսումները կիրականացնեն համայնքի հետ համատեղ, որից հետո տրվելու է տեխնիկական առաջադրանք: Դրանից հետո կազմվում է նախագիծը և հիմնական գնահատման հաշվետվությունը: Այժմ լիցենզիան թույլատրվում է 50 տարով՝ եթե պաշարներ կան: 3-րդ լսման ժամանակ տրվելու են բոլոր սպասվելիք ազդեցությունները, նրանց մեղմացման պայմանները: Ձեզ հետ համաձայնեցնելուց հետո կուղարկվի վերջին փորձաքննության: Բոլոր դիտողությունները վերացնելու հետո՝ եթե ստանում է դրական եզրակացություն, ապա արդեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տալիս է արդյունահանման թույլտվություն: Եթե ընկերությունը լիցենզիայի ավարտից 6 ամիս առաջ դիմեր, ապա ժամկետը կերկարացվեր, բայց այժմ պետք է ևս 3 հանրային լսումներ՝ համաձայն օրենքի պահանջների:

Ամփոփում (Ավետիք Համբարձումյան)

Շնորհակալություն բոլորին մասնակցության համար: Հանրային քննարկումն ավարտվեց:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Դեդալ» ՍՊԸ տնօրեն **Ռաֆիկ Համբարձումյան**

Հանրային քննարկման վարող
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտագործման բաժնի պետ **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**